ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2015**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով և 67-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մարտի 15-ի N 193-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի ենթակայությանը հանձնված «Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի սանմաքրման ծառայությունը 2003 թվականից իրականացրել է «Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերությունը: Կենտրոն վարչական շրջանի և «Կենտրոն-Մաքրություն» ՓԲԸ-ի միջև սանմաքրման ծառայություններն իրականացնելու համար 2014 թվականի ընթացքում կնքվել են թվով 9 պայմանագրեր, որոնց ընդհանուր գումարը կազմել է 1134.0 մլն. դրամ: Նշված պայմանագրերի համաձայն Ընկերությունն իրականացրել է 1131.0 մլն. դրամի ծառայություններ: Ընկերության հետ կնքված պայմանագրի գործողության ժամկետն ավարտվել է 2014 թվականի նոյեմբերի 30-ին, իսկ 2014 թվականի դեկտեմբերի 1-ից Կենտրոն վարչական շրջանում սանմաքրման ծառայությունն իրականացվում է այլ օպերատորի՝ «Սանիտեք» ընկերության կողմից:

2014 թվականի 9 ամիսների հաշվետվության համաձայն՝ Ընկերության դեբիտորական պարտքերը 01.10.2014թ. դրությամբ կազմել են 20.1 մլն. դրամ, կրեդիտորական պարտքերը՝ 158.5 մլն. դրամ, իսկ դրամական միջոցների մնացորդը՝ 0.4 մլն. դրամ, կամ առկա էր 138.0 մլն. դրամի ֆինանսական ճեղքվածք: Ընկերության վնասը 9 ամիսների արդյունքներով կազմել է 25.7 մլն. դրամ:

2014 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Ընկերության դեբիտորական պարտքերը կազմել են 63.7 մլն դրամ և կրեդիտորական պարտավորությունները՝ 170.6 մլն. դրամ /աշխատավարձի գծով՝ 41.1 մլն. դրամ, վառելիքի՝ 67.5 մլն. դրամ, հարկային պարտավորությունների գծով՝ 28.2 մլն. դրամ, պահեստամասերի գծով՝ 25.4 մլն. դրամ/, որից 40.1 մլն դրամը՝ 2013 թվականին առաջացած պարտքն է:

Ընթացիկ ծախսերի ծածկվածությունը հանգեցնում է Ընկերության հետագա գործունեության ֆինանսական ցուցանիշների վատթարացմանը, ինչի հետևանքով Ընկերության հետագա գործունեությունը դառնում է ոչ նպատակահարմար:

Ելնելով վերոգրյալից, ներկայացվում է «Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿԵՆՏՐՈՆ-ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Կենտրոն-Մաքրություն» փակ բաժնետիրական ընկերությունը լուծարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ